

ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՀԱՐԿԱՅԻՆ ԵՎ ՄԱՔՍԱՅԻՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ N 42/10

ք.Երևան

16 հուլիսի 2018թ.

Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի հարկային և մաքսային մարմինների բողոքարկման հանձնաժողովը (այսուհետ նաև՝ Հանձնաժողով), քննության առնելով շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ «ԷԼԱՆՍ» ՍՊԸ-ի դիմում-բողոքը՝

ՊԱՐԶԵՑ

1. Բողոքարկման առարկան, դիմում-բողոքով բերված փաստարկները և ներկայացված պահանջները

«ԷԼԱՆՍ» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) հայտնում է, որ 21.05.2018թ. վերսկսել է իր գործունեությունը և համաձայն գործող օրենսդրության (գործունեությունը վերսկսելուց հետո 20-օրյա ժամկետում հարկային մարմին ներկայացրել է շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարություն) 09.06.2018թ. (գործունեության վերսկսման 13-րդ օրը) հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային համակարգի միջոցով բազմիցս փորձ է արվել ներկայացնել շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարությունը, որը համակարգի կողմից չի ընդունվել՝ ուղարկելով հետևյալ հաղորդագրությունը. «Հայտարարությունն ընդունվել չի կարող, քանի որ համարվում եք ԱԱՀ վճարող»:

Միաժամանակ, Ընկերությանը ՀՀ ԿԱ ՊԵԿ «Թեժ գծից» տեղեկացրել են, որ խնդիրը կապված է էլեկտրոնային համակարգի հետ և շտկելու համար անհրաժեշտ է չգրանցվող հայտարարության էլեկտրոնային տարբերակը Print Screen եղանակով ուղարկել online_support@taxservice.am էլեկտրոնային հասցեին: Նույն օրը՝ 09.06.2018թ. «ԷԼԱՆՍ» ՍՊԸ կողմից հայտարարության էլեկտրոնային տարբերակը ուղարկվել է online_support@taxservice.am էլեկտրոնային հասցեին (փաստը հաստատող ֆայլը կցված է): Խնդիրը մինչ օրս չի լուծվել, ինչի արդյունքում, հարկ վճարողի կամքից անկախ, բաց է թողնվել շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարության ներկայացման 20-օրյա ժամկետը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Ընկերությունը խնդրում է տրամադրել հնարավորություն ներկայացնելու շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարությունը, քանի որ խնդիրը կապված է տեխնիկական պատճառների հետ և Ընկերության կողմից կատարվել են անհրաժեշտ բոլոր քայլերը:

2. Դիմում-բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

Ընկերությունը 21.05.2018թ. վերսկսել է իր գործունեությունը և 09.06.2018թ. (գործունեության վերսկսման 13-րդ օրը), հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային համակարգի միջոցով բազմիցս փորձել է ներկայացնել շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարությունը, որը համակարգի կողմից չի ընդունվել՝ ուղարկելով հետևյալ հաղորդագրությունը. «Հայտարարությունն ընդունվել չի կարող, քանի որ համարվում եք ԱԱՀ վճարող»:

3. Հիմնավորումներ, պատճառաբանություններ և եզրահանգումներ

ՀՀ հարկային օրենսգրքի 254-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով հստակ սահմանված է, որ շրջանառության հարկ վճարողներ են համարվում հարկային տարվա ընթացքում

պետական գրանցում ստացած առևտրային կազմակերպությունը կամ որպես անհատ ձեռնարկատեր հաշվառված կամ որպես նոտար նշանակված ֆիզիկական անձը՝ համապատասխանաբար, որպես կազմակերպություն պետական գրանցման կամ որպես անհատ ձեռնարկատեր հաշվառման կամ որպես նոտար նշանակման օրվանից մինչև տվյալ հարկային տարվա ավարտը (բացառությամբ Օրենսգրքի 59-րդ հոդվածով սահմանված՝ հարկային տարվա ընթացքում ԱԱՀ վճարող համարվելու դեպքի), եթե հարկ վճարողը մինչև համապատասխանաբար՝ որպես կազմակերպություն պետական գրանցման կամ որպես անհատ ձեռնարկատեր հաշվառման կամ որպես նոտար նշանակման օրվան հաջորդող 20-րդ օրը ներառյալ հարկային մարմին է ներկայացրել հարկային մարմնի հաստատած ձևով հայտարարություն՝ շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ:

Օրենսգրքի 254-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով սահմանված է, որ մինչև հարկային տարվա փետրվարի 20-ը ներառյալ գործունեություն չիրականացրած (գործունեությունը դադարեցրած) առևտրային կազմակերպությունը կամ անհատ ձեռնարկատերը կամ նոտարը գործունեությունը վերսկսելու օրվանից մինչև տվյալ հարկային տարվա ավարտը (բացառությամբ Օրենսգրքի 59-րդ հոդվածով սահմանված՝ հարկային տարվա ընթացքում ԱԱՀ վճարող համարվելու դեպքի), եթե հարկ վճարողը մինչև գործունեությունը վերսկսելու օրվան հաջորդող 20-րդ օրը ներառյալ հարկային մարմին է ներկայացրել հարկային մարմնի հաստատած ձևով հայտարարություն՝ շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ:

Օրենսգրքի 254-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված են այն վավերապայմանները, որոնց առկայության պայմաններում տնտեսվարող սուբյեկտը չի կարող համարվել շրջանառության հարկ վճարող:

«ՊԵԿ տեղեկատվական բազայում առկա տվյալների համաձայն՝ ընկերությունը բավարարում է Օրենսգրքով նախատեսված բոլոր պահանջներին և սկսած 21.05.2018թ. կարող է համարվել շրջանառության հարկ վճարող:

Ելնելով վերոգրյալից և հաշվի առնելով այն հանգամանքը, որ տվյալ դեպքում շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարությունն ընկերության կողմից սահմանված ժամկետում չներկայացնելը պայմանավորված է եղել հայտարարությունների ընդունման էլեկտրոնային համակարգում առկա տեխնիկական խնդիրներով, ինչի մասին ընկերությունը բազմիցս բարձրաձայնել է, Հանձնաժողովը գտնում է, որ անհրաժեշտ է հնարավորություն ընձեռել ընկերությանը ներկայացնելու հայտարարություն՝ 21.05.2018թ.-ից շրջանառության հարկ վճարող համարվելու համար:

4. Եզրափակիչ մաս

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 20-րդ բաժնով, «Մաքսային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածով, Հանձնաժողովը

ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Բավարարել «ԷԼԱՆՍ» ՍՊԸ դիմում-բողոքը:
2. «ԷԼԱՆՍ» ՍՊԸ կողմից շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարություն ներկայացվելու դեպքում սկսած 21.05.2018թ.՝ համարել շրջանառության հարկ վճարող:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ



Ռ.ՄԱՇԱԴՅԱՆ